ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ԿԳՈՐԾԱՐԿՎԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՓԱԹԵԹԸ

საქართველოს შრომის ჯანმრთელობისა და სოციალური დაცვის სამინისტრო

***Ընթացիկ տարվա մայիսի 1-ից համընդհանուր առողջապահության ծրագրում կգործարկվի դիֆերենցված փաթեթը, եւ վարկանիշային մինչեւ 100 հազար միավոր ունեցող բենիֆիցարների ծրագրով կֆինանսավորվի քրոնիկական հիվանդությունների դեղորայքը:***

***Փոփոխությունների փաթեթը քննարկվեց ապրիլի 25-ի կառավարության հերթական նիստում:***

Իրականացված փոփոխությունների արդյունքում, միասնական բազայում սոցիալական անպաշտպան ընտանիքների տվյալներով, գրանցված անձինք, ում վարկանիշային միավորը 0-ից մինչեւ 100 հազար է, համընդհանուր առողջապահության ծրագրի շրջանակներում, կստանան քրոնիկ հիվանդությունների դեղորայքի ֆինանսավորում:

Կախված խմբից եւ համընդհանուր առողջապահության ծրագրի պայմաններից՝ դրանք սահմանվել են հետեւյալ կարգով. միջին եկամուտով քաղաքացիները, ում ամսական եկամուտը գերազանցում է հազար լարին, սակայն տարեկան եկամուտը չի գերազանցում 40 հազար լարին, կստանան համընդհանուր առողջապահության ծրագրով նախատեսված սահմանափակ սպասարկումներից կամ մասնավոր ապահովագրության փաթեթից օգտվելու իրավունք: Բացի դրանից, այդ կատեգորիայում ընդգրկված քաղաքացիները, անկախ մասնավոր ապահովագրական փաթեթից, նախագծի շրջանակներում, կօգտվեն ուռուցքային հիվանդությունների, մասնավոր քիմիաթերապիայի եւ հորմոնաթերապիայի անվճար բուժման ծրագրից, նաեւ ծննդաբերության եւ կեսարյան հատման սպասարկումներից:

Պակաս եկամուտ ունեցող քաղաքացիները, ում ամսական եկամուտը հազար լարիից քիչ է, ինչպես նաեւ ինքնուրույն գործող եւ ապօրինի եկամուտ ունեցող անձինք, անկախ մասնավոր ապահովագրության առկայության, պահպանում են համընդհանուր առողջապահության ծրագրից օգտվելու իրավունքը, բայց՝ սահմանափակ փաթեթով:

Սոցիալապես անպաշտպան քաղաքացիները, եւ այն անձինք, ում վարկանիշային միավորները 70 հազարից մինչեւ 100 հազար է եւ 6-ից մինչեւ 18 տարեկան անչափահասները, առանց փոփոխության, պահպանում են համընդհանուր առողջապահության ծրագրով նախատեսված սպասարկումների ողջ ծավալը: Միաժամանակ, չի սահմանափակվում մասնավոր ապահովագրական փաթեթից նրանց օգտվելու իրավունքը:

Բարձր եկամուտ ունեցող քաղաքացիները, ում տարեկան եկամուտը գերազանցում է 40 հազար լարին, չեն կարողանա օգտվել համընդհանուր առողջապահության ծրագրից:

Համընդհանուր առողջապահության ծրագրով սպասարկումների ծավալը սահմանվում է՝ ելնելով անհատական եկամուտների ծավալից:

Ծրագրի շրջանակներում, ֆինանսավորվում է բոլոր կատեգորիաների կանանց ծննդաբերությունը, ինչպես նաեւ բոլոր խմբերը մնում են առողջապահության պետական մյուս ծրագրերից օգտվողների շրջանակներում:

ՆՈՐ ԱՂՈԹԱՏՈՒՆ

# ԳՈՒՄԲՈՒՐԴՈՅՈՒՄ ՕԾՎԵՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

***Ապրիլի 22-ին, Ախալքալաքի շրջանի Գումբուրդո գյուղում, հանդիսավորապես օծվեց վերջին տասը տարիների ընթացքում թվով 58-րդ նորակառույց եկեղեցին:***



2011 թվականին Գումբուրդոյի բարեպաշտ հայորդիներ Խաչատուր եւ Սայաթ Սահարյան եղբայրները, ովքեր այսօր ապրում եւ աշխատում են արտասահմանում, հանձն առան իրականություն դարձնել մանկությունից իրենց ընտանիքի երազանքը՝ գյուղի Խաչի Դուռնա տեղանքում կառուցել աղոթատուն՝ համագյուղացիներին ընձեռելով հոգեւոր կանոններով եւ ծիսական արարողություններով ապրելու եւ նաեւ տեղացիների ավանդական Սուրբ Զատիկը այստեղ հավուր պատշաճի նշելու հնարավորություն: Սահարյան ընտանիքի եկեղեցասեր եղբայրների կողմից իրականացվեցին եկեղեցու շինարարության աշխատանքները: Կրկնազատկի տոնին գումբուրդոցիները նշեցին Սուրբ Զատկի տոնը:

Եկեղեցական արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Ախալքալաքի ժողովրդական ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանը, շրջանային վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանը, բարերար Սայաթ Սահարյանը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ եւ Սամցխե-Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգէն վարդապետ Սալբիյանի մասնակցությամբ Սրբասուրբ մյուռոնով օծվեց նորակառույց Սուրբ Խաչ եկեղեցին:

Նշենք, որ Գումբուրդոյում հայերը հաստատվել են 1828 թվականից՝ գաղթելով Էրզրումի նահանգի Պալնի-Շակավ գյուղից:

*Վիրահայոց թեմի մամլո դիվան*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՍ՝ ԻՆՉԻ ՎՐԱ ԲԵՎԵՌԵԼ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ




***Աշխարհի առաջատար երկրներում բավական զարգացած է ապահովագրական համակարգը:***

***Աշխարհում ամենաթանկ արժեքով ապահովագրությունը գրանցվել է անգամ Գինեսի գրքում: Դա կյանքի ապահովագրությունն է, որը նրա տիրոջ վրա նստել է 201 միլիոն դոլար: Այդ ապահովագրական պոլիսի տերը տեխնոլոգիական գործարարությամբ զբաղված ամերիկացի միլիարդատեր է: Ցավոք, նրա ով լինելը մինչ օրս հայտնի չէ: Ապահովագրության միտումն աստիճանաբար ներթափանցել է նաեւ Վրաստան, թեպետ այդ ոլորտում թերացումները դեռեւս շատ են: Այդ մասին մեզ հետ զրույցում նշեց փաստաբան Իրակլի Ուտիաշվիլին:***

- Չնայած, վերջին տարիներին այս ոլորտն ակնհայտորեն առաջադիմել է, ապահովագրական ընկերության գործունեության մեջ թերացումները դեռեւս շատ են: Հաճախ այդ ընկերություններն անբարեխիղճ վերաբերմունք են ցուցաբերում դիմորդների նկատմամբ եւ խուսափում նրանց գումարների վճարումից: Նախ, ուշադրությունը բեւեռենք բժշկական ապահովագրության վրա, քանի որ հենց դրանում են նկատվում ամենանշանակալի խախտումները: Իմ աշխատանքի ընթացքում, ապահովագրության այդ ոլորտում խախտումների շատ փաստեր են վավերացվել: Հաճախ ապահովագրական ընկերությունները պայմանավորվում են պրովայդեր կլինիկաների հետ, եւ, երբ հիվանդի վիճակի մասին փաստաթղթերը ձեւակերպվում են, շատ բաներ սխալ են լրացվում: Փաստաբանի՝ իմ աշխատանքի ժամանակ եղել է դեպք, երբ ապահովագրական ընկերության հաճախորդը բուժման համար դիմել է պրովայդեր կլինիկային, որտեղ գտնվել է 30 ժամ: Նրանք ցուցաբերել են բժշկական օգնություն, սակայն փաստաթղթերում նշվել է, որ նա կլինիկայում է եղել 23 ժամ, այսինքն՝ կլինիկայում գտնվելու ժամանակը գիտակցաբար նվազեցվել է, դրանով իսկ խուսափել են համապատասխան գումարի մուծումից:

30 ժամի համար ընկերությունը հիվանդին անհամեմատ ավելի մեծ գումար պետք է վճարեր: Հիշում եմ նման մի փաստ եւս: Բավական ճանաչված ու հեղինակավոր ընկերությունը հիվանդին չապահովեց ապահովագրական գումարով ու արդարացավ նրանով, որ պրովայդեր կլինիկան որոշակի լիմիտ է սահմանել: Դատավարության ժամանակ հաճախորդին ապացուցում են, որ մատուցվող սպասարկումը գերազանցում է սահմանված լիմիտը: Իսկ դա նշանակում է, եթե լիմիտը սահմանված է 2 կամ 3 հազար լարիի չափով, ապա ապահովագրական ընկերությունը դրանից ավելի չի վճարում: Ցանկացած մարդ կարող է հայտնվել նման իրավիճակում եւ չստանալ ապահովագրությամբ իրեն պատկանող գումարը:

***- Բատոնո Իրակլի, ապահովագրության համար ո՞րն է ամենամեծ բարդությունը:***

- Նախ, մառախլապատ ու անորոշ են պայմանագրերը: Ապահովագրական ընկերությունների հետ ձեւակերպված պայմանագրերը հաճախ կազմված են այնպիսի բարդ տերմիններով, որ եթե ընկերությունը ցանկանա, ապա միշտ կարող է խուսանավել ու հրաժարվել համապատասխան գումարի վճարումից: Նրանց հաճախորդների մեծ մասը պայմանագիրը չի էլ կարդում եւ, եթե անգամ կարդում է, միեւնույն է, այնքան անորոշ է, որ ոչինչ չեն կարողանում հասկանալ: Ավելին, պայմանագրերում երբեմն լինում են այնպիսի կետեր, որոնք երկակի մեկնաբանություն ունեն եւ ապահովագրական ընկերություններին հնարավորություն են տալիս խուսափել գումարի վճարումից: Լուրջ հիմնախնդիր է նաեւ այն, որ երբ ապահովագրական ընկերությունը բժշկական հաստատությանը ժամանակին փոխանցում չի կատարում, ապա բժշկական անձնակազմը չի կարողանում ժամանակին աշխատավարձ ստանալ:

***- Կյանքի ապահովագրության դեպքում՝ ի՞նչ խախտումներ են նկատվել:***

- Վարկը ստանալիս՝ բանկերը վարկատուներին անմիջապես զգուշացնում են, որ տվյալ անձի մահվան դեպքում այն մարելու է ապահովագրական ընկերությունը: Իսկ իրականում, եթե վարկատուն մահանում է, ապա բանկը վարկի մարումը պարտադրում է դրա հանձնման ժամանակ երաշխավոր կանգնած անձին: Ապահովագրական ընկերությունները գումարը չեն մուծում նաեւ ինքնասպանության դեպքում: Նույնը տեղի է ունենում նաեւ, երբ մահը կապված չի լինում պատահականության հետ, եւ, եթե վարկատուն գիտեր, որ իր առողջական վիճակը վատ է ու այդ մասին բանկին չի տեղեկացրել:

Մեծ թվով խախտումներ են վավերացվել նաեւ ավտոմեքենաների ապահովագրության ժամանակ: Օրինակ, եթե տեղի է ունենում ավտոճանապարհային պատահար, եւ մեքենայի ղեկի մոտ վարորդը, որին մեքենան չի պատկանում կամ չունի վարորդական վկայական, այդ ժամանակ ապահովագրական ընկերությունը հրաժարվում է վճարել ապահովագրությամբ նախատեսված գումարը: Եղել է դեպք, երբ վթարից հետո հաճախորդին հրավիրել են եւ պարտադրել դիմում գրել, որ ինքը հրաժարվում է ապահովագրական գումարից: Ավելին, դա տեղի է ունեցել հոգեբանական ճնշման պայմաններում: Մեքենան ապահովագրած վարորդներից մեկը վթարի է ենթարկվել: Նրա մեքենան բախվել է ծանոթի մեքենային: Չգիտես ինչու, ապահովագրական ընկերությունը հայտարարել է, որ դա նախօրոք ծրագրված միջադեպ է, ու մինչ օրս հրաժարվում են մուծել ապահովագրական գումարը:

***- Անշարժ գույքի ապահովագրության ժամանակ նույնպե՞ս նման խախտումներ են հանդիպում:***

- Բնականաբար: Սեփականատերը պետք է ներկայացնի, թե ինչ նպատակով է քանդվել կամ վնասվել անշարժ գույքը, եւ, եթե այդ նպատակը չհաստատվի, ապա ապահովագրական ընկերությունը ազատվում է գումարը վճարելուց: Եղել են դեպքեր, երբ բնակարանում ծագած հրդեհի համար մեղադրանքներ են ներկայացրել ընտանիքի անդամներին:

Սարսափելի վիճակ է ագրոապահովագրության ոլորտում: Ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչներն այցելում էին տարածաշրջաններ, տուժված ֆերմերներին պարտադրում ստորագրել պայմանագրեր, եւ հետո ընկերությունները, ցանկացած պատրվակով, խուսափում են վճարել ապահովագրական գումարը: Դրան նպաստում է նաեւ այն, որ պայմանագրի հոդվածները միմյանց հակասում են: Հետեւաբար, բոլորին, ովքեր ցանկանում են ապահովագրվել, խորհուրդ ենք տալիս ուշադրությամբ ընթերցել ապահովագրական պայմանագիրը եւ հստակորեն ծանոթանալ պայմաններին: Բոլոր դեպքերում, պետք է հստակ իմանալ գլխավոր պայմանները, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանալ օգուտ ստանալ:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԿԱՆԱՅՔ ՍՏՈՒՄ



***Ինչպես երեւում է, կանանց մոտ երեւակայությունը գերազանցում է տրամաբանական մտածելակերպը: Հենց դրա համար էլ նրանք ցանկալին իրողություն են համարում ու դա հաստատելու համար՝ ստում: Հետաքրքիր է՝ գիտական այլ բացատրություն կա՞, թե՞ ոչ:***

***Ե. Մարկոսյան***

***Թբիլիսի***

Որոշ առումով, դուք իրավացի եք, թեպետ գիտնականները փորձել են հանրագումարել այն պատճառները, որոնք կանանց ստիպում են ստել:

**1. Նպատակների իրականացում:** Մեզանից շատերի համար բառերը ոչ այնքան տեղեկություն փոխանցելու, որքան զրուցակցի վրա հուզականորեն ազդելու միջոց են: Որոշ կանայք շատ են սիրում բառերով ազդել այլ մարդկանց վրա, արձագանք ու հուզական տրամադրություն առաջացնել, հրահրել: Երբեմն կանանց արտահայտություններում կարեւորը ոչ թե հավաստիությունն է, այլ արդյունքը, որ նրանք ցանկանում են ստանալ:

**2. Անհրաժեշտ իմիջի ստեղծում:** Երբ հասկանում են, որ գտել են երազանքների տղամարդուն, այստեղ գործի է դրվում ամբողջ զինապահեստը: Կինը կարող է կատարյալ կնոջ դեր խաղալ, համեստ ձեւանալ: Հանկարծ կարող է պարզվել, որ նա, ինչպես իր ընտրյալը, սիրում է ֆուտբոլ, հոքեյ, նույնիսկ, սիրելի երաժշտական խմբերն են միեւնույնը: Բացի այդ, կարեւոր է նաեւ շատ լավ տպավորություն թողել սիրելիի մայրիկի վրա, հետեւաբար, աչքի ընկնող զգեստը փոխարինել առավել համեստով կամ կոստյումով: Առաջին հայացքից դա շատ անվնաս սուտ է, բայց ամեն ինչ կարող է փոխվել, երբ աղջիկն ամուսնանա: Երազանքն իրականացավ՝ էլ ինչի՞ համար ստել ու ձեւացնել:

**3. Անվտանգ իրադրության ապահովում:** Նման կերպ կինն աշխատում է ընտանիքում պահպանել հավասարակշռությունն ու հանգստությունը:

**4. Սուտ՝ կարեկցանքից ելնելով:** Գրեթե բոլոր կանայք ստում են իրենց տղամարդկանց՝ չվիրավորելու նրանց զգացմունքները: Եթե հանկարծ տղամարդն իր սիրելիին կասկածի ստելու մեջ, ապա պետք չէ միանգամից զայրացած բացահայտել ստախոսին: Չմտածված արարքներ մի գործեք: Ավելի լավ է սառնասրտորեն վերլուծել իրադրությունը, գտնել պատճառները, որոնց համար ձեր ընտրյալը ձեզ ստում է ու աշխատում հարթել տարաձայնությունները: Միայն դրանից հետո, կարելի է նրա հետ խոսել այն մասին, որ ձեզ խաբել են: Թող այդ զրույցը բարեկամական, ոչ թե թշնամական լինի:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԸ

***Ֆրանսիայի Կաննի քաղաքում Grand Hyatt Martinez հյուրանոցը կարելի է ամենաթանկը համարել աշխարհում:***

***Այս հյուրանոցում նախագահական լյուքսը կարելի է վարձակալել օրական 45 հազար դոլարով: Դրա մակերեսը կազմում է 300 քառակուսի մետր: Փորձագետները ճշտում են, որ դա Եվրոպայի ամենամեծ պենտհաուսներից մեկն է: Լյուքսի պատերը զարդարում է գեղանկարչության հավաքածուն, համարի արժեքի մեջ են մտնում նաեւ սպասավորների պետի ծառայությունները:***




Վարկանիշի երկրորդ տեղը բաժին է ընկել Grand Resort Lagonissi հյուրանոցին՝ Հունաստանի Ատիկա Լագոնիսի մասնավոր կղզում: Այստեղ արքայական շքատան համար օրական վճարում են 35 հազար դոլար: Յուրաքանչյուր բունգալո ունի սեփական լողափը՝ լողավազան հիդրոմերսմամբ, անձնական ծառայապետ, ավագ խոհարար եւ նույնիսկ դաշնակահար, որը կարող է նվագել պահանջով: Նշվում է, որ կղզում տարբեր ժամանակներում հանգստացել են Լեոնարդո դի Կապրիոն եւ Մել Գիբսոնը: Հյուրանոցի անձնակազմը խոսում է ռուսերեն:

Առաջատարների եռյակը եզրափակում է Նյու Յորքի Four Seasons-ը: Այստեղ պենտհաուսը կարելի է վարձակալել օրական 34 հազար դոլարով: Այդ գումարի դիմաց, զբոսաշրջիկն իր տնօրինության տակ կստանա 400 քառակուսի մետր շքեղ հարկաբաժին՝ հյուրանոցի 52-րդ հարկում: Այն ներառում է ինը սենյակ եւ չորս պատշգամբ՝ համայնապատկերային լուսամուտներով: Նաեւ հյուրին կտրամադրեն Rolls-Royce՝ անձնական վարորդով եւ 24-ժամյա անհատական սպասարկում:

Բացի դրանից, թոփ-10-ում նվազման կարգով տեղ են գտել բահամյան AtlantisParadiseIslandResort-ը եւ Ֆիջիում գտնվող Laucala Island Resort ը (գիշերվա դիմաց՝ 25 հազարական դոլար), Լոնդոնի The Connaught-ը (23,5 հազար դոլար), Դուբայի Բուրջ ալ Արաբը (18 հազար դոլար), Ջայփուրում գտնվող Raj Palace-ը եւ Ժնեւի Le Richemond-ը (17,5 հազարական դոլար), ինչպես նաեւ Փարիզի Park Hyatt-Vendłme-ը (15 հազար դոլար):

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## Ինչպե՞ս պայքարել գարնանային ալերգիայի դեմ

***Ալերգիային ավելի հակված են այն մարդիկ, ովքեր ունեցել են կամ ունեն ալերգիայով տառապող բարեկամներ, ունեն թոքերի քրոնիկ հիվանդություն, ապրում կամ աշխատում են փոշոտ վայրերում, կամ այնպիսի միջավայրում, որտեղ կան գազերի, օդափոխու կուտակումներ: Հավանական է, որ ինչ-որ մի բանի նկատմամբ ալերգիա ունեցող մարդկանց մոտ կարող են առաջանալ ալերգիկ ռեակցիաներ նաեւ այլ ալերգենների նկատմամբ:***

Ալերգիկ ռեակցիաների առաջացման պատճառ կարող են լինել սննդամթերքները (հատկապես՝ ցիտրուսները, շոկոլադը, կոնսերվանտները, ընդեղենը, ձուն, ձուկը, ծովամթերքները), փոշին, դեղորայքը, կոսմետիկան, տնային կենդանիների մորթին եւ այլն:



Այդ պատճառով ալերգիաներին հակված մարդկանց խորհուրդ է տրվում, վիրուսային վարակի դեպքում, հիմնական բուժման հետ մեկտեղ, օգտագործել նաեւ հակաալերգիկ դեղամիջոցներ:

Սեզոնային ալերգիան կարող է առաջանալ բուսականության ծաղկման կամ ծաղկափոշու պատճառով:

**Ինչպե՞ս խուսափել ալերգիայից**

Ցավոք, դեռ գոյություն չունի ալերգիայի առաջացման հավանականությունն ամբողջովին բացառող միջոց: Խոցելի խմբում գտնվող մարդիկ պետք է.

- Հրաժարվեն ընտանի կենդանիներից (կամ սահմանափակեն վերջիններիս մուտքը ննջասենյակ):

- Տնից դուրս հանեն բոլոր գորգերը, տանն ունենան շատ քիչ փափուկ կահույք, գրքերն ու բրդյա իրերը պահեն փակվող պահարաններում:

- Հրաժեշտ տան ծաղկող բույսերին:

- Շաբաթական նվազագույնը մեկ անգամ կատարեն տան խոնավ մաքրում (մաքրելուց հետո հիվանդը պետք է սենյակ մտնի 3-4 ժամ անց):

- Օգտագործեն հիպոալերգիկ նյութերից պատրաստված բարձեր ու վերմակներ:

- Հնարավորության դեպքում, հրաժարվեն սինթետիկ հագուստներից, աշխատեն լավ օդափոխվող վայրերում, սահմանափակեն կոսմետիկայի օգտագործումը (նախընտրելի է հիպոալերգիկ կոսմետիկան):

- Կենցաղային քիմիան օգտագործեն ռեզինե ձեռնոցների առկայության դեպքում:

- Պահպանեն հիպոալերգիկ սննդակարգ:

**Ալերգիայի ախտանիշներն են՝**

- Արցունքահոսություն, աչքերի կարմրություն, ցավեր կոկորդում, հարբուխ՝ առանց մրսածության երեւույթների, ցան մաշկի վրա, քոր, փռշտոց, արյան ընդհանուր անալիզի մեջ էոզինոֆիլների եւ/կամ E, O, M, C իմունոգլոբինների ավելացում, հազ, շնչարգելություն:

Եթե ձեզ մոտ ժամանակ առ ժամանակ նկատվում է վերը թվարկված ախտանիշներից գոնե մեկը կամ մի քանիսը, ապա դուք պետք է ճշտեք, թե կոնկրետ ի՞նչն է ձեզ մոտ ալերգիա հարուցում:

Երբ ալերգենը բացահայտված է, պետք է նվազագույնի հասցնել ձեր շփումը դրա հետ:

Պետք է միշտ հիշել, որ անուշադրության մատնված ալերգիան կարող է կտրուկ իջեցնել կյանքի որակը, ընդհուպ մինչեւ հիվանդի լրիվ մեկուսացում արտաքին միջավայրից գարուն-ամառ ժամանակահատվածում: Ինչպես նաեւ չի կարելի զբաղվել ինքնաբուժությամբ. անպայման խորհրդակցեք բժիշկ-ալերգոլոգի հետ: Միայն մասնագետը կարող է ձեզ համար հակաալերգիկ թերապիա ընտրել եւ մարնամասնորեն նկարագրել ձեզ հարմար ճիշտ սննդակարգն ու կենսակերպը:

Եթե ձեզ մոտ ալերգիան ինչ-որ դեղորայքից է, ապա պետք է անհապաղ դիմել բժշկի, քանի որ այդ դեպքում վնասն ավելի շատ կարող է լինել, քան բուժման արդյունքը:

Եթե ձեզ մոտ ալերգիան ծաղկափոշուց է, ապա ծաղկման շրջանում կարելի է ավելի քիչ բացել պատուհանները: Եթե հայտնի է ալերգիայի առաջացման ժամանակը, ապա խորհուրդ է տրվում դրանից 2-3 շաբաթ առաջ սկսել օգտագործել հակաալերգիկ դեղամիջոցներ եւ դրանք շարունակել ընդունել ծաղկման ամբողջ ժամանակահատվածում:

Եթե դուք ցանկանում եք պարզել՝ արդյոք ալերգիա ունե՞ք, թե՞ ոչ, պետք է տարին 1-2 անգամ անցնեք հետազոտություն, որն իր մեջ ներառում է.

- Արյան անալիզ, իմունային համակարգի հետազոտություն, ալերգիայի թեստեր, ֆլյուրոգրաֆիա կամ թոքերի ռենտգեն հետազոտություն:

**Ալերգիայի բուժում**

- Հիպոալերգիկ սննդակարգի պահպանում, հակաալերգիկ միջոցների օգտագործում, ալերգենի հետ շփման բացառում, ծխախոտից հրաժարում:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Հայ ժողովուրդն աշխարհում մշակութային մի հուշարձան է: Նրա ապահով պահպանումը պարտքն է ոչ միայն մեր՝ հայերիս, այլեւ քաղաքակիրթ մարդկության:

***ՎԱԶԳԵՆ Ա***
***(1908-1994)***
***Ամենայն հայոց կաթողիկոս***

Բանաստեղծելն, ի սկզբանե, իմաստության մի ճյուղն է վառ, Աստվածային, երկնին վայել եւ լսողաց հույժ օգտակար:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(1172-1216)***
***Վրաց բանաստեղծ***

Այն ժողովուրդը, որը չի խոնարհվում զավթիչների առաջ, զավթիչների աչքում միշտ բարբարոս ժողովուրդ է:

***ԱՐԱԳՈՆ***
***(1897-1982)***
***Ֆրանսիացի գրող***

Բանկիրը մի մարդ է, որը ձեզ անձրեւանոց է տալիս, երբ արեւը պայծառ լուսավորում է, եւ խլում է այն պահին, երբ սկսվում է անձրեւը:

***ՄԱՐԿ ՏՎԵՆ***
***(1835-1910)***
***Ամերիկացի գրող***

Մի ժողովրդի յուրաքանչյուր մեծ սխրանք կատարվում է բոլոր ժողովուրդների համար:

***ՍՏԵՖԱՆ ՑՎԱՅԳ***
***(1881-1942)***
***Ավստրիացի գրող***

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Մեկը ասում է.*

*- Որ ես մահանամ, ուզում եմ դժոխք ընկնել:*

*- Ինչո՞ւ,- հարցնում են:*

*- Դե՛, գնամ, տեսնեմ՝ այդ ի՞նչ տեղ է, որ ոչ ոք չի ուզում գնա:*

*Մահանում է, երազանքը կատարվում է՝ ընկնում է դժոխք: Տեսնում է՝ շատ դռներ: Մի քանիսը բացում է, տեսնում՝ ոչ ոք չկա: Մի ուրիշ դուռ է բացում, մեկը ներսից ասում է.*

*- Բո՛:*

*Սա վախենում է ու ասում.*

*- Ցա՛վ, քո տիրու հերը թաղեմ: Էսպես ես անում էլի, որ մոտդ մարդ չի ուզում գա:*

*☺ Մեկը՝ կինոթատրոնում: Ֆիլմի թունդ պահին կատաղած ցուլն արագ վազքով էկրանից գալիս է դեպի հանդիսատեսը: Սա տեղում անհանգիստ շարժումներ է անում:*

*Կողքի նստածը հարցնում է.*

*- Ի՞նչ եղավ, ա՛յ ախպեր, ինչի՞ տեղիցդ թռար:*

*- Ցավդ տանեմ, բա որ մեզ վրա գա՞...*

*- Ո՞վ... Ցո՞ւլը... Ի՞նչ ես ասում, էկրանից ոնց կգա:*

*- Դա ես ու դու ենք հասկանում, անասունը շատ է հասկանում...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԷԻՆ

*Ապրիլի 26-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամային հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Զալբերին:*



Հանդիպման սկզբում Սերժ Սարգսյանը նախ շնորհավորեց Հերբերտ Զալբերին ԵՄ խորհրդի կողմից նրա առաքելության երկարաձգման առթիվ եւ մաղթեց հաջողություններ:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան Հայաստան-Եվրամիություն հարաբերություններին, Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրություններին եւ դրանից հետո նոր կառավարության կողմից իրականացվելիք աշխատանքներին ու տարբեր ոլորտներում սկսված բարեփոխումներին, ինչպես նաեւ ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացն առաջ մղելու հնարավորություններին:

ԵՄ հատուկ ներկայացուցիչը շնորհավորեց Հայաստանում ԱԺ ընտրությունների հաջող անցկացման կապակցությամբ` ընդգծելով, որ Հայաստանն այդ ընտրություններով լուրջ քայլ կատարեց դեպի առաջ ե'ւ կայունության, ե'ւ երկրում ժողովրդավարության ամրապնդման տեսանկյունից, իսկ նկատված որոշ խնդիրների լուծման ուղղությամբ, ըստ Հերբերտ Զալբերի, կարելի է աշխատել:

ԵՄ հատուկ ներկայացուցիչը գոհունակությամբ խոսեց նաեւ Հայաստան-ԵՄ հարաբերություններում վերջին շրջանում գրանցված արդյունքների մասին` նշելով 2017թ. փետրվարին Հայաստանի նախագահի Բրյուսել կատարած այցը, որի ժամանակ ազդարարվեց Հայաստան-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի շուրջ բանակցությունների ավարտը, իսկ մարտի 21-ին Երեւանում կայացավ համաձայնագրի նախաստորագրումը:

## ՆՈՐ ԼԻՑՔ` ՀԱՅ - ՀՆԴԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ



*Ապրիլի 25-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Հնդկաստանի փոխնախագահի, խորհրդարանի Վերին պալատի նախագահ Մոհամմադ Համիդ Անսարիի գլխավորած պատվիրակությանը:*

Զրուցակիցները երկուստեք համակարծիք էին, որ հազարամյակների պատմություն ունեցող հայ-հնդկական հարաբերություններն ամուր հիմք են միջպետական կապերի ամրապնդման եւ տարբեր ոլորտներում համագործակցության օրակարգն ընդլայնելու համար: Սերժ Սարգսյանը եւ Հնդկաստանի փոխնախագահ Մոհամմադ Համիդ Անսարին կարեւորեցին բարձրաստիճան փոխայցելությունները եւ տարբեր մակարդակներում ակտիվ շփումները, այդ թվում` երկու երկրների օրենսդիր մարմինների միջեւ:

Հնդկաստանի փոխնախագահը հանդիպման ժամանակ Հայաստանի նախագահին փոխանցեց Հնդկաստանի նախագահ Պրանաբ Մուքերջիի ուղերձը, որով նա Սերժ Սարգսյանին պաշտոնական այցով հրավիրեց Հնդկաստան` քննարկելու հայ-հնդկական փոխգործակցության օրակարգն ու հարաբերությունների խորացման հնարավորություններն ու հեռանկարը:

Երկկողմ կապերից բացի, հանդիպմանն անդրադարձ եղավ տարածաշրջանի իրավիճակին, առկա մարտահրավերներին, ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացին, ինչպես նաեւ միջազգային արդի խնդիրներին:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ` ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՎ

*Մոսկվայում, ռուսական կողմի նախաձեռնությամբ, ապրիլի 28-ին կայացավ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանի, Սերգեյ Լավրովի եւ Էլմար Մամեդյարովի աշխատանքային հանդիպումը:*



Հանդիպմանը շարունակվեցին քննարկումները ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացն առաջ մղելու շուրջ: Ընդգծվեց Վիեննայում եւ Սանկտ-Պետերբուրգում 2016թ. ապրիլին ու հունիսին կայացած գագաթաժողովներին ձեռք բերված համաձայնությունների իրականացման անհրաժեշտությունը:

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները երախտագիտություն հայտնեցին Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարարին` ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ հանգուցալուծմանն աջակցելուն ուղղված շարունակական ջանքերի համար: Նախարարները պայմանավորվեցին շարունակել շփումները` քննարկված բոլոր հարցերի առնչությամբ:

Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի նախարարների եռակողմ հանդիպումից հետո, նրանց միացան նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները` Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի դեսպանները, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը: Կայացավ մտքերի փոխանակում ղարաբաղյան կարգավորման գործընթացի վերաբերյալ:

## ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ ԲՈՒՀԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

*Հայաստանի կառավարությունը հաստատեց Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա` ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) եւ ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը: Հայաստանի կրթության եւ գիտության նախարարությունը նախատեսում է շուրջ 2637 տեղ, որից 137-ը` Հայաստանի պետբյուջեից, առանց լրացուցիչ ֆինանսավորման:*

Մեկ այլ որոշմամբ, կապահովվի բարձրագույն կրթության շարունակականությունը եւ բարձր որակավորմամբ կադրերի պատրաստումն` ըստ կրթական ծրագրերի: Այն կնպաստի պետության համար առաջնային ու կարեւորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստմանը: Հայաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, 2017-2018 ուստարվա մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառությունը կազմակերպելու նպատակով, Հայաստանի կառավարության հաստատմանն է ներկայացրել 1650 տեղ, որից 1259-ը` առանց տարկետման իրավունքի եւ 391 տեղը` տարկետման իրավունքով: Պահուստային տեղերի բաշխումը եւ թափուր մնացած տեղերի վերաբաշխումը կիրականացվի մրցույթի ամփոփումից հետո:

Երիտասարդ մասնագետների պատրաստման շարունակականությունն ու գիտական աշխատանքներում նրանց ներգրավումն ապահովելու նպատակով էլ գործադիրը 2017-2018 ուստարվա համար հաստատել է ասպիրանտական կրթական ծրագրով ուսումնառության 379 տեղ, որից 140 տեղ առկա ուսուցմամբ` տարկետման իրավունքով եւ 202 տեղ հեռակա ուսուցմամբ` առանց տարկետման իրավունքի, 95 տեղ օրդինատուրայի կրթական ծրագրով, 20 տեղ ինտեռն կրթական ծրագրով, 13 տեղ` դոկտորանտուրայի կրթական ծրագրով:

### ՅՈՒՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԸ` ՀԱՊԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ



*Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Յուրի Խաչատուրովը 2017թ. մայիսի 2-ից նշանակվել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար: Այդ մասին ՀԱՊԿ-ի` Բիշքեկում անցկացվող ոչ պաշտոնական գագաթաժողովի արդյունքներով, լրագրողներին հայտնել է կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վալերի Սեմերիկովը:*

*Որոշումն ընդունվել է միաձայն:*

### ԴՅՈՒՐԱՑՈՒՄՆԵՐ` ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

*Վերջերս մի շարք պետությունների քաղաքացիների համար, Հայաստան` մուտքի վիզայի տրամադրման ընթացակարգի պարզեցման ուղղությամբ կատարվող աշխատանքների շրջանակում, Հայաստանի սահմանային անցակետերում իրականացվել է փաստաթղթերի լրացման եւ մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի դյուրացում: Հայաստան` մուտքի վիզա ստանալու համար կվերացվի օտարերկրացիների կողմից դիմում-հարցաթերթիկ լրացնելու պահանջը` առավելագույնս պարզեցնելով վարչարարությունը եւ բարելավելով օտարերկրացիներին մատուցվող ծառայությունների որակը:*

### ԿԱՆԳՆԱԾԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ «ՆԱԻՐԻ» ՓԱՌԱՏՈՆԸ

*Հայաստանի սփյուռքի նախարարի մտահղացմամբ եւ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ, այս տարի Հանքավանում կանցկացվի ժողովրդական գործիքների փառատոն: Փառատոնը կկրի «Նաիրի» անվանումը: Այն անցկացվելու է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո:*

*- Հանքավանում, փառատոնի շրջանակում, արդեն իսկ ստեղծվել են հայկական տարաբնույթ ժողովրդական գործիքների պատկերներով հուշաքարեր,- ասաց նախարարը: Մրցանակաբաշխության ժյուրին կազմված է լինելու պրոֆեսիոնալ երաժիշտներից: Մայիսի 6-ին Հանքավանում ծառատունկ է անցկացվելու, եւ ամեն տարի այնտեղ ամեն մի մրցանակակրի անունով ծառ է տնկվելու:*

### ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

*Սեւանա լճի մակարդակը ապրիլի վերջին մեկ շաբաթվա ընթացքում բարձրացել է 6 սանտիմետրով: Ինչպես տեղեկացրին Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության «Հայհիդրոմետ» ծառայությունից, 2017 թվականի ապրիլի 27-ի դրությամբ, Սեւանա լիճը ծովի մակարդակից գտնվել է 1900մ 67սմ բարձրության վրա, ինչը 25 սանտիմետրով բարձր է նախորդ տարվա նույն օրվա եւ 6 սանտիմետրով բարձր` մեկ շաբաթ առաջ գրանցված նիշից:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(28 ապրիլի)

*Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
| --- | --- | --- |
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 483,70 | 486,20 |
| ԵՎՐՈ | 524,00 | 530,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,43 | 8,61 |

*Ապրիլի 13-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը ավելացել է 1,0 դրամով:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ

*30.04.2017. Աշխարհամատրան կիրակի (Կանաչ կիրակի)*



*05.05.2016. Հիսուս Քրիստոսի Համբարձման տոն*

Տոնը նշվում է Քրիստոսի Հարության 40-րդ օրը շարժականությամբ՝ ապրիլի 30-ից մինչեւ հունիսի 3-ը: Հարությունից հետո, Քրիստոս 40 օր մնում է երկրի վրա եւ երեւում Իր աշակերտներին: Այդ ընթացքում, Հիսուս Իր վարդապետությունն ուսուցանում է նրանց, իսկ վերջին հանդիպման ժամանակ օրհնում ու պատգամներ է տալիս առաքյալներին, ապա՝ համբարձվում երկինք:

Ի հիշատակություն պատմական այս օրվա, Սուրբ Էջմիածնում Համբարձման տոնի առթիվ մատուցվող Սուրբ պատարագի ընթացքում կատարվում է Հայրապետական մաղթանք: Քրիստոսի Համբարձման տոնն ուղեկցվում է նաեւ ժողովրդական հանդիսություններով եւ կոչվում է Ջանգյուլում (գյուլ՝ նշանակում է վարդ, ծաղիկ): Կանայք այդ օրն անվանում էին «Ծաղկամոր կիրակի»:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

## ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ՝ ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ



Հայ մեծ գրող ու մանկավար, թումանյանական «Վերնատան» հիմնադիրներից մեկի՝ Ղազարոս Աղայանի (1840-1911թթ.) պայծառ հիշատակը ոգեկոչող արարողությունը գրողի ծննդավայրում՝ Բոլնիսիի շրջանի Բոլնիս-Խաչեն գյուղում, տոնվում է 2000 թվականից: Եվ ավանդաբար տոնահանդեսն իր շուրջն է համախմբում Վրաստանի եւ Հայաստանի մտավորականության տարբեր ներկայացուցիչներին՝ դպրոցականներին, ուսանողներին, Աղայանի գրական ստեղծագործությունների սիրահարներին:

Այս տարի հանդիսույթը տեղի կունենա մայիսի 13-ին, ժամը 12:00-ին:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ

## ՎՐԱՑԵՐԵՆԻ ՕՐԵՐ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

*Երեւանի Մխիթար Սեբաստացու անվան կրթահամալիրի (տնօրեն՝ Աշոտ Բլեյան) եւ Թբիլիսիի թիվ 98 հանրային դպրոցի (տնօրեն՝ Գիորգի Մոնցեմլիձե) միջեւ համագործակցությունը 8 տարվա պատմություն ունի: Ասենք նաեւ, որ երեւանյան այդ դպրոցում արդեն մի քանի տարի է, ինչ վրաց լեզու է դասավանդվում:*



Հերթական ամենամյա նախագծի՝ «Վրացերենի օրեր՝ կրթահամալիրում» շրջանակներում, Թբիլիսիի թիվ 98 դպրոցի 51 հոգուց բաղկացած խումբը՝ աշակերտներ, ուսուցիչներ եւ ծնողներ, այս օրերին Երեւանում էին:

Երեք օրերի ընթացքում թբիլիսցիները մասնակցեցին կրթահամալիրի մարզական պարապմունքներին եւ կավագործության դասին, սովորեցին հայկական երգեր ու «Վանա ծկնորս» պարը, եղան Սուրբ Հռիփսիմեի եկեղեցում եւ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, դիտեցին թբիլիսցի հայտնի լուսանկարիչ Յուրի Մեչիտովի «Վրաստան՝ կրկնակի էջեր» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը:

Հյուրընկալ կրթարանի «Հարթակ» ակումբում կայացած հանդիպմանը երկու դպրոցների ղեկավարները կարեւորեցին նախագծի նշանակությունը՝ որպես հայ-վրաց դարավոր բարեկամությունը շարունակող օղակ, եւ շնորհակալություն հայտնեցին բոլոր մասնակիցներին: Հանդիպմանը ներկա էին նաեւ Հայաստանում Վրաստանի դեսպանատան աշխատակիցներ:

Ձեռնարկն ավարտվեց համերգով, որի ընթացքում հայկական եւ վրացական գեղարվեստական կատարումներով հանդես եկան երկու կրթօջախների սաները:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

***Վրաստանի ԿԳ նախարարության փորձագետ***

*Նկարում.- Քույր-դպրոցների տնօրեններ Գիորգի Մոնցեմլիձեն (ձախից) եւ Աշոտ Բլեյանը:*

ՍՊՈՐՏ

## ՄԱՐԶԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ



Նինոծմինդայի կենտրոնական մարզահրապարակում տեղի ունեցավ ավանդական 41-րդ մարզական տոն - միջոցառումը՝ նվիրված «Հրաժեշտ Ջավախքի ձմռանը» որտեղ ներկայացվեց ավելի քան 10 մարզաձեւ՝ ֆուտբոլ, շախմատ, վազք, ծանրաձողի բարձրացում, ձեռնամարտի մրցում եւ այլն:

Այն կազմակերպել էր Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության մշակույթի եւ սպորտի ծառայությունը:

Մրցաշարում հաղթողները պարգեւատրվեցին մեդալներով, գավաթներով, հուշանվերներով, իսկ մասնակիցները՝ պատվոգրերով:

***ՍՐԲՈՒՀԻ ՍԱՆԱՄՅԱՆ***

## ԱՌԱՋԸՆԹԱՑ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը: Դրա համաձայն, Վրաստանի հավաքականը նախորդի համեմատությամբ առաջադիմել է չորս տեղով եւ զբաղեցնում է 122-րդ տեղը: 18 հորիզոնականով առաջադիմել է նաեւ Հայաստանի թիմը, որը ներկայումս հանգրվանել է 67-րդ հորիզոնականում:

Վարկանիշային աղյուսակի առաջատարը փոխվել է: Բրազիլիայի հավաքականն առաջադիմել է եւ գլխավորում է աղյուսակը: Արգենտինայի թիմը երկրորդ տեղում է: Լավագույն տասնյակի մեջ մտել են նաեւ Գերմանիայի, Չիլիի, Կոլումբիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Պորտուգալիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի թիմերը:

Ախալքալաքի մունիցիպալիտետի Մերենիայի հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը եւ «Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես ցավակցում են հանրային դպրոցի տնօրեն Անուշ Քախկցյանին, նրա մոր՝

***Սաթենիկ Պերճի ՊՈՂՈՍՅԱՆ-ԻՍՊԻՐՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ:





## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր, նախկին ծանրամարտիկ ... Միրզոյան: 5.Կիսանկուղային փոքրիկ գինետուն: 10.Դժգույն, գունատ, դալկադեմ: 11.Ավ.Իսահակյան «... ես, բեզարած ես»: 13.Անտառում ծառախիտ, խոնավ տարածք: 14.Մրգերից ու հատապտուղներից պատրաստված պահածո: 16.Քրտնաջան աշխատել: 17.Անցնող-գնացող, չմնացող: 20.Ադոլֆ Հիտլերի սիրուհին՝ ... Բրաուն: 21.Նար-Դոսի «Ես եւ ...» վիպակը: 22.Ժամանակի միավոր: 24.Թատերական ներկայացման տեսակ: 27.Հայ գրող, փիլիսոփա, Ա.Շիրակացու գործերի վերծանող ... Մագիստրոս: 30.Օժանդակ բայ: 31.Վրաց գրող ... Դումբաձե: 32.Գրող Արամ Թովմասյանի գրական կեղծանունը՝ Լեռ ...: 33.Ե'ւ ականջ, ե'ւ բռնակ: 34.Իտալացի կոմպոզիտոր Ջ.Վերդիի օպերաներից: 37.Հայաստանի մայրաքաղաքներից: 38.Պոչ, տուտ: 39.Թիակի ոսկորը: 40.... Աստված: 43.Մակերեսի չափման միավոր: 44.Հերոսուհի «Կովկասի գերուհին» ֆիլմում: 46.Ոստիկանի գրածը վարորդին: 48.«Ինչո՞ւ է աղմկում գետը» ֆիլմի գլխավոր հերոսի անունը: 50.Նար-Դոսի նովելաշարի հերոս՝ ...ապան Յագոր: 51.Մաշտոցյան այբուբենի տառ: 52.Լեհ գրող ... Միցկեւիչ: 53.«Ես իմ Մասիս ...ն եմ սիրում» (Ե.Չարենց): 54.Վաստակաշատ կինոդերասաններ ե'ւ Գասպարյանը, ե'ւ Շերենցը: 55.Քաջ, անվախ, կտրիճ: 56.Կիսաքուն, քունը չառած: 55.Քաջ, անվախ, կտրիճ: 56.Կիսաքուն, քունը չառած: 57.Ֆրանսիացի դերասանուհի ... Բեռնար:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Խոզի ձագը: 3.Թռչունների խումբը: 4.Քաղաք Կիլիկիայում: 5.Սպորտային հագուստի ֆիրմա: 6.Ե'ւ անիվ, ե'ւ աղբյուրի ակունք: 7.Հայ ֆիդայի Նիկոլ ...: 8.Կերպար Գ.Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունում: 9.Ածականի գերադրական աստիճանը: 12.Երկիր մոլորակի արբանյակը: 15.Գրական ստեղծագործության տեսակ: 16.Գավառ Հայաստանում: 18.Գր.Նարեկացու «Մատյան ողբերգությանը» ժողովրդի մոտ: 19.Գինու տեսակ: 23.Գետ Հայաստանում: 25.Հայոց աստվածուհի, Արամազդի դուստրը: 26.Հենվել, հույսը դնել, լսել: 28.Մետրոյի կայարան Թբիլիսիում: 29.Արշակունի թագավոր: 33.Պետություն Աֆրիկայում: 35.Իրականությունը տեսնող: 36.Հարյուր տարի: 42.Մադրասում լույս տեսած հայ առաջին պարբերականը: 39.Գետ Վրաստանում: 41.Կրծող կենդանի, մեծ մուկ: 42.Ոչ սարքին: 45.Ե'ւ բառի, ե'ւ ծառի մաս: 47.Իտալացի կոմպոզիտոր Վինչենցո Բելինիի «չափ» օպերան: 49.Արաքս գետի անվանումներից:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Յաթաղան: 9.Ապրիլ: 10.Տեսք: 11.Ստնդիաց: 13.Ինենց: 16.Ավե: 17.Ռուր: 19.Բյուջե: 22.Կուզիկ: 24.Ծրագիր: 25.Կոմի: 27.Լոլիտա: 29.Էնթոնի: 32.Լայզա: 33.Պոթոսի: 35.Փշոտ: 38.Ռուս: 40.Աքացի: 41.Իմիջ: 44.Նոքա: 47.Աբե: 48.Ասեղ: 50.Միստր: 51.Կով: 52.Թո: 53.Նար: 54.Շվի: 55.Ասես:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Յախտա: 2.Գարդե: 3.Պատառ: 4.Շաքի: 5.Կրոն: 6.Ելեց: 8.Նեցուկ: 12.Նվազ: 14.Նայա: 15.Ողջի: 18.Սկոտ: 19.Բրոնզ: 20.Ուգրո: 21.Երեւի: 23.Իկիտոս: 26.Մալի: 28.Ոլոռ: 29.Էյր: 30.Թափք: 31.Նվոց: 34.Թուրքիա: 36.Շանս: 37.Տիտղոս: 39.Շիբ: 42.Մարշ: 43.Ձեկի: 45.Ոմն: 46.Ասր: 48.Ավա: 49.Եթե:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445